

## ԱՍՏՈՒԾԱԾՆՉԱԿԱՆ ԱՌՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

**25 ԲԵ. ՍՐԲՈՑ ԿՈՒՄԱՆԱՅՆ՝ ՅՈՒԼԻԱՆԵԱՅ ԵՒ ՎԱՍԻԼՈՒԴԻՌՈՅ, ԵՒ ՍՐԲՈՑ ԱՔՐԱՅԱՍՈՒ ԵՒ ԽՈՐԵՆԱՅ ԵՒ ԱՆԱՐԾԱԾ ԲԺՇԿԱՅՆ՝ ԿՈԶՄԱՅԻ ԵՒ ՂԱՄԻԱՆՈՍԻ, ԵՒ ԱՍՏՈՒԾԱՏՐՈՅ ՎԿԱՅԻՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԵՆ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 6.14--7.1**

Բնաւ՝ անհաւատներուն գործակից մի՛ ըլլաք: Ի՞նչ կապ կրնայ ունենալ արդարը անօրէնին հետ, կամ ի՞նչ նոյնութեան եզր կրնայ ըլլալ լոյսին ու խաւարին միջեւ: Ի՞նչ համաձայնութիւն կրնայ ըլլալ Քրիստոսի եւ սատանային միջեւ, կամ ի՞նչ գործ ունի հաւատացեալը անհաւատին հետ: Ի՞նչ մամուլին կայ Աստուծոյ տաճարին եւ մեհեաններուն միջեւ:

Արդարեւ մենք ենք կենդանի Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ. *«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ պիտի ապրիմ: Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ եւ անոնք իմ ժողովուրդս»:* Ահա թէ ինչո՞ւ Աստուած կը հրահանգէ մեզի. *«Անջատ եւ հեռու կեցէ՛ք հեթանոսներէն. պիղծ բաներու մի՛ դպչի՛ք, եւ ես ձեզ պիտի ընդունիմ: Ես ձեզի հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս եւ աղջիկներս պիտի ըլլաք,- կ'ըսէ Ամենակալ Տէրը»:*

Սիրելիներ, այս խոստումները մեզի՛ եղած են: Ուստի հեռու մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

**ԱԷՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԷՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒՎԱՍԻ 8.1-3** Անկէ ետք Յիսուս տասներկու աշակերտներուն հետ քաղաքներն ու գիւղերը կը շրջէր՝ քարոզելով եւ Աստուծոյ արքայութիւնը ակետելով: Իրեն հետ էին նաեւ կարգ մը կիներ, որոնք չար ոգիներէ եւ հիւանդութիւններէ բժշկուած էին, ինչպէս Մարիմասը, որ Մագդաղեմացի կը կոչուէր եւ որմէ՛ եօթը չար ոգիներ հանած էր, Դերովդէսի պալատին վերակացու Քուզայի կինը՝ Յովհաննան, Շուշանը, ինչպէս նաեւ շատ մը ուրիշներ, որոնք իրենց միջոցներով կը հոգային Յիսուսի պէտքերը:

**26 ԳԵ. ՍՐԲՈՑՆ՝ ՂՈՒԵԿԻԱՆՈՍԻ ՔԱՅԱՆԱՅԻՆ, ՏԱՐԱԳՐՈՍԻ, ՊՐՈՔՐՈՍԻ, ԱՆԴՐՈՆԻԿՈՍԻ, ՈՆԵՍԻՍԵԱՅ ԵՒ ԱՅԼՈՑ ԱՇԱԿԵՐՏԱՅՆ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ**  
**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԵՆ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 2.14-17**

Արդ, գոհութիւն Աստուծոյ, որ Յիսուս Քրիստոսի յաղթական երթին մասնակից կը դարձնէ մեզ, եւ մեր միջոցաւ իր գիտութեան բոլոր կը տարածէ ամենուրեք: Փրկութեան ճամբուն մէջ գտնուողներուն մէջ ապրինք, թէ՛ կորուստի ճամբուն մէջ գտնուողներուն, մեր կեանքերը Քրիստոսի ձեռքով Աստուծոյ ընծայուած անուշահոտ խունկի պէս իրենց բոլոր կը տարածեն: Կորուստի ճամբուն մէջ գտնուողներուն համար՝ մահաբոյր եւ մահաբեր կը թուի մեր կեանքը, բայց փրկութեան ճամբուն մէջ գտնուողներուն համար՝ կեանքի բուրմունք է, կեանքի տանող: Սակայն ո՞վ կրնայ այսպիսի կեանք մը ապրիլ: Անշուշտ ոչ անոնք՝ որոնք Աստուծոյ խօսքը վաճառքի կը հանեն, այլ՝ մենք, որ անկեղծօրէն կը խօսինք Աստուծոյ առջեւ՝ որպէս Քրիստոսի միացած Աստուծոյ պատգամաւորները:

**ԱԷՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԷՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒՎԱՍԻ 6.13-19**

Առաւօտուն իր մօտ կանչեց իր աշակերտները եւ անոնցմէ տասներկու հոգի ընտրեց, որոնք նաեւ առաքեալ կոչեց: Արդ, առաքեալներն էին՝ Սիմոնը, որ Պետրոս ալ անուանեց, անոր եղբայրը՝ Անդրէասը, Յակոբոսը, Յովհաննէսը, Փիլիպպոսը, Բարթողոմէոսը, Մատթէոսը, Թովմասը, Ալփիէոսի որդին՝ Յակոբոսը, Նախանձայոյ կոչուած Սիմոնը, Յակոբի որդին՝ Յուդան եւ Իսկարիոտացի Յուդան, որ մատնիչը եղաւ:

Ապա անոնց հետ տափարակ տեղ մը իջաւ: Դոն էին բոլոր աշակերտները, ինչպէս նաեւ ժողովուրդի մեծ բազմութիւն մը հաւաքուած էր Գրէաստանի բոլոր կողմերէն, Երուսաղէմէն եւ շրջակայքէն եւ Տիրոսի ու Սիդոնի ծովեզերեայ շրջաններէն: Բոլորն ալ եկած էին Յիսուսի խօսքերը մտիկ ընելու եւ իրենց հիւանդութիւններէն բուժուելու: Անոնք որոնք չար ոգիներէ կը տառապէին՝ կը բժշկուէին: Ամբողջ ժողովուրդը կ'ուզէր իրեն դպչիլ, որովհետեւ իրմէ՛ գօրուիւն ղուրս կ'ելլէր եւ կը բժշկէր բոլորն ալ:

**27 ԳԵ. ՊԱՅՔ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՅԻՆ ՆԱՄԱԿԵՆ ԹԵՍԱԴՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ 2.1-12** Դուք անձամբ գիտէք, եղբայրներ, թէ ձեզի տուած մեր այցելութիւնը ապարդիւն չեղաւ: Այլ, ինչպէս գիտէք, Փիլիպպի մէջ խոշտանգուելէ եւ անարգուելէ ետք՝ Աստուծոմով քաջութիւնը ունեցանք ձեզի գալու եւ Աստուծոյ Աւետարանը քարոզելու, հակառակ այն բուռն ընդդիմութեան՝ որուն հանդիպեցանք: Արդարեւ, ձեզի ուղղուած մեր յորդորը ո՛չ մոլորութեան վրայ հիմնուած էր, ո՛չ ալ աղտոտ եւ նենգ միջոցներու: Այլ խօսեցանք այնպէս՝ ինչպէս Աստուած կ'ուզէ, որովհետեւ Աստուած փորձեց մեզ եւ իր Աւետարանը մեզի վստահեցաւ: Կը խօսինք՝ ո՛չ թէ մարդոց հաճելի ըլլալու համար, այլ՝ Աստուծոյ, որ մեր սրտին խորհուրդները կը քննէ: Ինչպէս լաւ գիտէք, ո՛չ շողոքորթութիւն ըրինք եւ ո՛չ ալ մեր շահը փնտռեցինք:

Աստուած վկայ է: Ոեւէ մէկէն ալ փառք չփնտռեցինք, ո՛չ ձեզմէ, ո՛չ ալ ուրիշներէն: Իբրեւ Քրիստոսի առաքեալներ՝ կրնայինք ծանրանալ ձեր վրայ, բայց հեզութեամբ վարուեցանք: Ճիշդ ինչպէս մայր մը իր զաւակները կը սնուցանէ, այնպէս ալ մենք գորովանքով վերաբերեցանք ձեզի հետ. եւ ո՛չ միայն Աստուծոյ Աւետարանը ձեզի փոխանցելու պատրաստ էինք, այլ՝ մեր կեանքն ալ տալու, այնքան որ սիրելի եղաք մեզի:

Վստահաբար կը յիշէք, եղբայրներ, մեր ծանր աշխատանքն ու յոգնութիւնը. թէ ի՞նչպէս մէկ կողմէ գիշեր-ցերեկ կ'աշխատէինք՝ ձեզմէ ոեւէ մէկուն բեռ չըլլալու համար, եւ միւս կողմէ Աստուծոյ Աւետարանը կը քարոզէինք ձեզի: Դուք վկայ էք, վկայ է նաեւ Աստուած, թէ ինչպիսի՜ մաքուր, արդար եւ ուղիղ վարմունք ունեցանք բոլոր հաւատացեալներուդ հանդէպ: Շատ լաւ գիտէք, թէ ճիշդ ինչպէս հայր մը կը վերաբերի իր զաւակներուն հետ՝ այնպէս ձեզմէ իւրաքանչիւրը քաջալերեցինք ու մխիթարեցինք, թախանձագին խնդրելով՝ որ ապրիք այնպիսի՜ կեանք մը, որ վայել ըլլայ Աստուծոյ. անոր՝ որ ձեզ հրաւիրեց իր արքայութեան եւ փառքին:

#### **ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 12.41-48** Պետրոս ըսաւ.- Տէ՛ր, այս օրինակը մեզի՞ համար ըսիր, թէ բոլորին:

Տէրը ըսաւ.- Ո՞վ է հաւատարիմ եւ իմաստուն տնտեսը: Անիկա է, որ տէրը իր ծառաներուն վրայ վերակացու կը կարգէ, որպէսզի ճիշդ ատենին անոնց կերակուրի բաժինը տայ: Երանի՛ այն ծառային, որոնք տէրը երբ կու գայ, գինք կը գտնէ իր պաշտօնը լաւապէս կատարած: Իրապէս կ'ըսեն ձեզի, որ տէրը այդ ծառան իր բոլոր ստացուածքներուն վերակացու պիտի կարգէ: Սակայն եթէ ծառան ինքնիրեն ըսէ՝ «Տէրս կ'ուշանայ գալու», եւ սկսի միւս ծառաներն ու սպասուիկները ծեծել, ուտել, խմել եւ գինովնայ, յանկարծ իր չակնկալած ատենին եւ չսպասած ժամուն տէրը պիտի գայ եւ զայն խստութեամբ պիտի պատժէ եւ անհաւատներուն կարգին դասէ:

Այն ծառան, որ իր տիրոջ կամքը գիտէ եւ չի պատրաստեր կամ չի կատարեր անոր ուզածը, շատ պատիժ կը ստանայ: Իսկ ան որ չի գիտեր տիրոջ պահանջածը եւ պատիժի արժանի բաներ կ'ընէ, այդ ծառան նուազ պատիժ կը ստանայ: Որուն որ շատ տրուած է՝ շատ պիտի պահանջուի, իսկ որուն որ աւելի շատ տրուած է՝ շատ աւելի պիտի պահանջուի:

**28 ԵՇ. ՍՐԲՈՑԻ ԿԴԵՄԱՅ ԳԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԲԱԳԱՐԱՏԱՅ ՏՈՃՈՒՄԵՆՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՍԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՍԱԿԵՆ ՓԻԼԻՊՊԵՏԻՆԵՐՈՒՆ 4.1-7** Ուստի, սիրելի եւ կարօտալի եղբայրներ, դուք՝ որ իմ ուրախութիւնս էք եւ պսակս, այսպէս ամբօրէն Տիրոջ միացած մնացէք, սիրելիներ:

Եւողիային եւ Սիմոնիին կ'աղաչեմ, եւ կը թելադրեմ՝ որ իրարու հետ հաշտուին, քանի Տիրոջ միացած են: Դուն ալ, ո՛վ հաւատարիմ լծակիցս, կը խնդրեմ որ օգնես այս երկու կիներուն, որովհետեւ ինձի հետ պայքարեցան Աւետարանին տարածման համար, Կղեմէսի եւ միւս գործակիցներուս հետ միասին, որոնց անունները կեանքի գիրքին մէջ արձանագրուած են:

Միշտ ուրախ եղէք Տիրոջմով. դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղէք: Բոլորին հանդէպ ազնիւ եղէք: Շուտով Տէրը կու գայ: Ոեւէ բան թող չմտահոգէ ձեզ. այլ միշտ ձեր աղօթքներուն եւ աղաչանքներուն մէջ գոհունակ սիրտով Աստուծմէ խնդրեցէք ինչ բանի որ կարիքը կը զգաք, եւ այն ատեն Աստուծոյ խաղաղութիւնը, որ միտքով կարելի չէ հասկնալ, խաղաղ պիտի պահէ ձեր սիրտերն ու միտքերը, որոնք Քրիստոս Յիսուսի միացած են:

#### **ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 9.1-6** Յիսուս կանչեց տասներկու աշակերտները եւ անոնց զօրութիւն եւ իշխանութիւն տուաւ բոլոր չար ոգիները հանելու եւ հիւանդութիւնները բժշկելու:

Այս զանոնք դրկեց որ Աստուծոյ արքայութիւնը քարոզեն եւ հիւանդները բժշկեն: Եւ անոնց ըսաւ.- Ծամբու համար ձեզի հետ ո՛չ մէկ բան առէք. ո՛չ զաւազան, ո՛չ պարկ, ո՛չ հաց, ո՛չ դրամ, ո՛չ ալ աւելորդ հագուստ ունեցէք: Ո՛ր տունը որ մտնէք, հոն իջեւանեցէք՝ մինչեւ որ մէկնիք հոնկէ: Իսկ երբ դուրս ելլէք այն քաղաքէն, որուն բնակիչները ձեզ չեն ընդունած, ձեր ոտքի փոշին թօթուեցէք՝ իբրեւ վկայութիւն անոնց դէմ:

Աշակերտները մեկնելով՝ սկսան շրջիլ քաղաքներն ու գիւղերը՝ Աւետարանը քարոզելով եւ հիւանդները բժշկելով ամէն տեղ:

**29 ՈՒՐ. ՊԱՅՔ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՍԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՍԱԿԵՆ ԹԵՍՍԱԴՈՆԻԿԵՏԻՆԵՐՈՒՆ 2.17-19** Սակայն մենք, եղբայրներ, թէպէտ ժամանակի մը համար որք մնացինք ձեզմէ, այսինքն՝ աչքէ հեռու եղանք, բայց սրտէ հեռու չեղանք: Ա՛յնքան մեծ էր ձեզ տեսնելու մեր փափաքը, որ ամէն ջանք ըրինք այդ ուղղութեամբ: Ես ինքս՝ Պօղոս, մէկէ աւելի անգամներ ուզեցի ձեր մօտ գալ, բայց Սատանան արգելք եղաւ մեզի: Արդարեւ, երբ մեր Տէրը Յիսուս Քրիստոս գայ, իր առջեւ ո՞վ պիտի ըլլայ մեր յոյսը կամ ուրախութիւնը, կամ յաղթանակի պսակը՝ որով կրնանք պարծիլ, եթէ ոչ դուք:

ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 12.49-59 ԵԿՅԱՅ ԿՐԱԿ ԾՁԵԼՈՒ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ԵՆ ՈՐՔԱՆԿ ԿՆՈՂԵՒ ՈՐ ԱՐՈՂԵՆ ԻՍԿ ԲՈՆԿԱԾ ԸԼԼԱՐ: ՄԿՐՏՈՒՔԻՆ ԵՆ ԻՆՏԻ ԿՐ ՍՊԱՍԵ, ԵՆ ՈՐՔԱՆԿ ԿՐ ՏՈՎԱԳՆԱԿԻՄ՝ ՄԻՆՅԵՆ ՈՐ ԱՆԻԿԱ ԿԱՏԱՐՈՒԻ: ԿՐ ԿԱՐԾԵՔ ՔԵ ԱՉԽԱՐԻԻՆ ԽԱՂԱՂՈՒՔԻՆ ԵՆ ՏԱԼՈՒ ԵԿՅԱՅ: Ո՛Յ: ԿՐՆԵՆ ԾՆՁԻ, Ո՛Յ ՔԵ ԽԱՂԱՂՈՒՔԻՆ, ԱՅԼ՝ ԲԱԺԱՆՈՒՄ: ԱՅԱԿԵՆ, ԵՔԵ ԸՆՏԱՆԻՔԻ ՄՐ ԵՆՅ ԻԻՆԳ ԱՆՊԱՄՆԵՐ ԿԱՆ, ԱԽՈՒ ԲԱԺՆՈՒԻՆ ԵՐԵՔՐ ԵՐԿՈՒՔԻՆ ՂԵՄ ԵՆ ԵՐԿՈՒՔՐ՝ ԵՐԵՔԻՆ: ՀԱՅՐԸ ԻՐ ՉԱՆԱԿԻՆ ՂԵՄ ԱԽՈՒ ԸԼԼԱՅ, ՉԱՆԱԿՐ ԻՐ ԽՈՐԸ, ՄԱՅՐԸ ԱՂՋԿԱՆ ՂԵՄ ԵՆ ԱՂՋԻԿՐ՝ ՄՈՐԸ, ԿԵՏՈՒՐԸ ԽԱՐԱԻՆ ՂԵՄ ԵՆ ԽԱՐԱՐ՝ ԿԵՏՈՒՐԻՆ:

Ապա ժողովուրդին ըսաւ.- Երբ տեսնէք որ ամպը արեւմուտքէն կու գայ, անմիջապէս կ'ըսէք «Անձրեւ պիտի գայ», եւ այդպէս ալ կ'ըլլայ: Երբ հովը հարաւէն փչէ՝ կ'ըսէք՝ «Սաստիկ տաք պիտի ըլլայ», եւ այդպէս ալ կ'ըլլայ: Կեղծաւորներ, երկիրքն ու երկիրը դիտելով կրնաք նախատեսել զալիք օդը, ինչո՞ւ սակայն չէք կրնար ներկայ ժամանակին իմաստը հասկնալ:

-Ինչո՞ւ դուք անձնապէս չէք դատեր ճիշդը: Այնպէս՝ ինչպէս երբ խնդրի մը համար թշնամիիդ հետ դատաւորին կ'երթաս, ճամբու ընթացքին ջանա՝ անոր հետ համաձայնիլ՝ տակաւին դատարան չհասած: Այլապէս քեզ դատաւորին առջեւ պիտի հանէ, դատաւորն ալ ոստիկանին պիտի յանձնէ եւ ոստիկանն ալ բանտ պիտի նետէ քեզ: Գիտցի՞ր, որ բանտէն պիտի չելլես՝ մինչեւ տուգանքիդ վերջին դահեկանը չվճարես:

**30 ՇՔ. ՄՐՈՑ ԱՈՒՔԵԼՈՑՆ ԵՒ ԱՈՒՋԻՆ ԼՈՒՍԱԴՐՉԱՑՆ ՄԵՐՈՑ ԹԱԴԵՆՍԻ ԵՒ ԲԱՐԹՈՒԴԻՍԵՆՍԻ ԱՈՒՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՊՕՂՈՍ ԱՈՒՔԵԱԼԻ ԱՈՒՋԻՆ ՆԱՄԱԿԵՆ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՄ 12.26- -13.10** ԵՔԵ մարմինին մէկ անդամը ցաւի՝ բոլոր անդամներն ալ միասին կը ցաւին, իսկ եթէ մէկ անդամը պատուելի՝ բոլոր անդամներն ալ միասին կ'ուրախանան:

Արդ, դուք թէպէտ առանձին-առանձին անդամներ էք, բայց միասնաբար կը կազմէք Քրիստոսի մարմինը: Այդ մարմինին, այսինքն՝ եկեղեցիին մէջ Աստուած բազմաթիւ անդամներ կարգեց՝ զանազան ծառայութեանց համար. նախ՝ առաքելները, երկրորդ՝ մարգարէները, երրորդ՝ ուսուցանողները, ապա՝ հրաշագործ զօրութիւն ունեցողները, ուրիշներուն օգնելու ընդունակները, վարչական կարողութեամբ օժտուածները, յափշտակութեան մէջ լեզուներ խօսողները եւ այդ լեզուներով խօսուածը մեկնաբանելու ատակ մարդիկը: Արդ, միթէ բոլորը առաքել՞ են. բոլորը մարգարէ՞ են. բոլորը ուսուցանող՞ են. բոլորը հրաշագործ զօրութիւն ունի՞ն. միթէ բոլորը բժշկելու շնորհքով օժտուած են. բոլորը լեզուներ խօսելու պարգե՞ւր ունին. կամ բոլորը կրնա՞ն այդ լեզուներով խօսուածը մեկնաբանել: Հետեւաբար՝ ձգտեցէք հասնիլ այն շնորհքներուն, որոնք լաւագոյնն են:

Բայց հիմա ես լաւագոյն ճամբան ցոյց պիտի տամ:

Եթէ մարդոց եւ հրեշտակներու լեզուները խօսին, բայց սէր չունենան, ի՞նչ տարբերութիւն կ'ունենան պղինձէ շէփորէն որ կը հնչէ, կամ ծնծղաներէն որ կը դօղանջեն: Եթէ մարգարէութեան պարգեւը ունենան, կարենան բոլոր խորհուրդներու խորքը թափանցել եւ հասնիմ ամբողջական գիտութեան, եւ նոյնիսկ լեռները տեղափոխելու չափ զօրաւոր հաւատք ունենան, բայց սէր չունենան, ոչինչ կ'արժեն: Ի՞նչ օգուտ, եթէ բոլոր ինչքերս աղքատներուն տամ եւ նոյնիսկ մարմինս կրակի մատնեն. եթէ սէր չունիմ՝ ոչինչ կ'օգտուիմ:

Սէր ունեցողը համբերատար կ'ըլլայ եւ քաղցրաբարոյ: Սէր ունեցողը չի նախանձիր, չի գոռոզանար, չի հպարտանար, անպատշաճ վարմունք չ'ունենար, միայն ինքզինք չի մտածեր, բարկութեամբ չի գրգռուիր, չարութիւն չի խորհիր, անհրաւութեան վրայ չ'ուրախանար, այլ՝ ուրախակից կ'ըլլայ ճշմարտութեան: Սէր ունեցողը միշտ կը զիջի, միշտ կը հաւատայ, միշտ կը յուսայ եւ միշտ կը համբերէ: Սէրը անվախճան է, մինչդեռ այս կեանքին հետ մարգարէական պատգամները վերջ պիտի գտնեն, հրեշտակներու լեզուներով խօսիլը պիտի դադրի, գիտութիւնն ալ վերջ պիտի գտնէ: Այժմ մեր գիտցածը անկատար է եւ մեր մարգարէութիւնն ալ՝ մասնակի: Բայց երբ կատարեալը գայ, այս անկատարութիւնը վերջ պիտի գտնէ:

ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԵՆՍԻ 9.35- -10.7 Յիսուս կը շրջէր բոլոր քաղաքներն ու գիւղերը, կ'ուսուցանէր ժողովարաններուն մէջ, Աստուծոյ արքայութեան աւետիսը կու տար եւ կը բժշկէր ժողովուրդին բոլոր ախտերն ու հիւանդութիւնները: Եւ տեսնելով ժողովուրդի բազմութիւնը, գթաց անոնց, որովհետեւ յոգնած էին եւ ցրուած՝ հովիւ չունեցող ոչխարներու պէս: Այն ատեն իր աշակերտներուն ըսաւ.- Հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ: Հետեւաբար խնդրեցէք հունձքի Տիրոջմէն, որ իր հունձքին համար մշակներ ղրկէ:

Յիսուս իր մօտ կանչեց տասներկու աշակերտները եւ անոնց իշխանութիւն տուաւ՝ պիղծ ոգիները իրենց հնազանդեցնելու եւ մարդոցմէ դուրս հանելու զանոնք, ինչպէս նաեւ բժշկելու բոլոր ցաւերն ու հիւանդութիւնները:

Տասներկու առաքելներուն անուններն են.- Առաջին՝ Սիմոն, որ Պետրոս կոչուեցաւ, եւ եղբայրը՝ Անդրէաս, Ջէբեդէոսի որդիները՝ Յակոբոս եւ եղբայրը Յովհաննէս, Փիլիպպոս եւ Բարթողոմէոս, Թովմաս եւ Մատթէոս մաքսաւոր, Ալփիէոսի որդին՝ Յակոբոս, եւ Ղեբէոս, որ Թադէոս կոչուեցաւ, Սիմոն Նախանձայոյց եւ Յուդա Իսկարիոտացի, որ մատնեց զինք:

Յիսուս այս տասներկու աշակերտները դրկեց՝ անոնց պատուիրելով.- Մի՛ երթաք հեթանոսներուն շրջանները եւ Սամարացիներուն քաղաքները մի՛ մտնէք, այլ մասնաւորաբար գացէք Իսրայէլի կորսուած ոչխարներուն: Ու երբ կ'երթաք, քարոզեցէք՝ թէ երկինքի արքայութիւնը մօտեցած է:

**ՂԵԿՏԵՄԲԵՐ 1 ԿԻՐ. Բ. ԿԻՐԱԿԷ ՅԻՍՆԱԿԱՑ ՍԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՍԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԷՆ**

36.22--37.11 Քեղկիայի որդի Եղիակիմը, որ արքունի հազարապետն էր, հրովարտակներու քարտուղար Սոմնասը եւ Ասափի որդի Յովաքը, որ արձանագրութիւն պահող քարտուղարն էր, իրենց վերարկուները պատռած՝ եկան Եզեկիա թագաւորին մօտ, եւ Սենեքերիմի հրամանատարին խօսքերը փոխանցեցին:

Եզեկիա երբ լսեց՝ իր հագուստները պատռեց, քուրձ հագաւ եւ ելաւ Տիրոջ տաճարը գնաց, եւ Եղիակիմ հազարապետը, քարտուղար Սոմնասն ու տաճարի քահանաներէն ծերերը, բոլորն ալ քուրձ հագած, դրկեց Ամոսի որդի Եսայի մարգարէին թով, որպէսզի անոր ըսեն. *«Եզեկիա այսպէս կ'ըսէ.- "Այսօր սուգի, նախատիքի, կշտամբանքի եւ բարկութեան օր է: Ծննդական կնոջ պէս՝ երկունքը բռներ է մեզ, բայց ոյժ չունինք ծնանելու: Թող քու Տէր Աստուածդ լսէ թէ ի՞նչ կ'ըսէ Ասորեստանի թագաւորին հրամանատարը, որ իր տիրոջ կողմէ՛ դրկուեցաւ կենդանի Աստուածը նախատելու այն նախատական խօսքերով, որ քու Տէր Աստուածդ լսեց: Արդ, հարցուր քու Տէր Աստուծոյդ, ի՞նչ պիտի ըլլայ մնացողներուս վիճակը"»:*

Երբ Եզեկիա թագաւորին ծառաները Եսայիի թով եկան, Եսայի ըսաւ անոնց. *«Չտեսեալը ըսէք ձեր տիրոջ.- Այսպէս կ'ըսէ Տէրը. Մի՛ վախճար այն խօսքերէն որ լսեցիր եւ անոնցմով Ասորեստանի թագաւորին պատգամաւորները զիս նախատեցին: Ահաւասիկ ես անոր հոգին պիտի խռովեմ այնպիսի լուրով մը, որ ստանալուն պէս իր երկիրը պիտի վերադառնայ եւ հոն սուրով պիտի սպաննուի»:*

Ասորեստանի թագաւորին հրամանատարը վերադարձաւ իր տիրոջ մօտ, որ Լաքիշէն ելած եւ Լիբնա քաղաքը պաշարած էր: Այնտեղ Սենեքերիմ լսելով որ Եթովպիոյ Թարակա թագաւորը իր վրայ յարձակած է, անոր դէմ դարձաւ: Նոյն ատեն պատգամաւորներ դրկեց Եզեկիային, ըսելով. *«Այսպէս ըսէք Յրէաստանի թագաւոր Եզեկիային.- Այն Աստուածը որուն ապաւիններ ես՝ թող քեզ չխաբէ, ըսելով թէ Երուսաղէմը Ասորեստանի թագաւորին ձեռքը պիտի չմատնուի: Միթէ չլսեցիր՞ թէ ի՞նչպէս Ասորեստանի թագաւորները ամբողջ աշխարհը կործանեցին: Կը կարծես որ դուն պիտի ազատի՞ս»:*

**ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ  
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ**

ԹԵՍԱԼՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՄ 4.1-11 Այսպէս ուրեմն, եղբայրներ, մենք ձեզի սորվեցուցինք թէ ի՞նչպէս պետք է ապրիլ Աստուծոյ հաճելի ըլլալու համար: Թէպէտ այդպէս կ'ապրիք արդէն, սակայն կը խնդրենք եւ Տէր Յիսուս Քրիստոսի անունով կը թելադրենք որ շարունակեք յառաջանալ ներկայ ձեր ընթացքին մէջ: Գիտէք թէ ի՞նչ պատուէրներ տուինք ձեզի Տէր Յիսուսի անունով, որովհետեւ Աստուծոյ կամքն է որ դուք սրբուիք եւ անենեւին հեռու մնաք պոռնկութենէ: Ձեզմէ՛ իւրաքանչիւրը թող սրբութեամբ ու պատուով ամուսնանայ: Կրթոտ ցանկութիւններու անձնատուր մի՛ ըլլաք հեթանոսներուն պէս, որոնք զԱստուած չեն ճանչնար. կամ չըլլայ որ մէկը եղբօր մը դէմ մեղանչէ անոր կիմը յափշտակելով, որովհետեւ այդ բոլորին համար Տէրը իր դատաստանին մէջ անողոք պիտի ըլլայ, ինչպէս սկիզբէն ըսինք ձեզի եւ ազդարարեցինք: Միթէ Աստուած մեր պղծալից կեանքը շարունակելու՞ հրաւիրեց մեզ, թէ սրբութեամբ ապրելու: Անշուշտ թէ սրբութեամբ ապրելու: Չտեսեալբար ով որ սրբութեան այս պատուէրը կ'արհամարհէ՝ մարդ մը անարգած չ'ըլլար, այլ նոյնիմքն զԱստուած, որ իր Սուրբ Չոզին կու տայ մեզի: Գալով եղբայրասիրութեան, մեր գրելուն պէտք չունիք, որովհետեւ ինքնին դուք Աստուծմէ՛ սորված էք զիրար սիրել, ինչպէս արդէն գործնապէս ցոյց կու տաք այդ սէրը ամբողջ Մակեդոնիայի բոլոր եղբայրներուն նկատմամբ: Բայց դարձեալ, եղբայրներ, կը խնդրենք որ աւելի առատամաք ձեր սիրոյն մէջ, ջանաք հանդարտ կեանք մը վարել, միայն ձեր գործին նայիլ եւ ձեր աշխատանքի վաստակով ապրիլ, ինչպէս որ պատուիրեցինք ձեզի, որպէսզի ձեր պարկեշտ ընթացքով յարգուիք չհաւատացողներէն եւ ոեւէ մէկուն կարօտ չմնաք:

**ԱԻԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ**

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 13.1-9 Ոմանք եկան Յիսուսի եւ պատմեցին այն գալիլիացիներուն մասին, որոնք Պիղատոսի կողմէ՛ սպանուեցան, երբ Աստուծոյ զոհ կը մատուցանէին: Յիսուս անոնց ըսաւ. *«Կը կարծէ՞ք թէ սպաննուող գալիլիացիները միւս բոլոր գալիլիացիներէն աւելի մեղաւոր էին, որ այդպիսի վախճան մը ունեցան: Ոչ: Կ'ըսեն ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ դուք բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք: Կամ ի՞նչ կը մտածէք այն տասներուք մարդոց մասին, որոնց վրայ ինկաւ աշտարակը Սելուզամի մէջ եւ*

*սպաննեց զանոնք: Անոնք աւելի՞ յանցաւոր էին քան Երուսաղէմի բոլոր բնակիչները: Ոչ: Կ'ըսեն ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք»:*

*Անոնց հետեւեալ առակը պատմեց. «Մարդ մը կար որ իր այգիին մէջ թզենի մը տնկած էր: Երբ ժամանակը եղաւ, թուզ քաղելու գնաց, բայց թզենիին վրայ պտուղ չգտաւ: Այգեպանին ըսաւ. "Այս երրորդ տարին է որ կու գամ թուզ քաղելու, բայց չեմ գտներ: Ուստի կտրէ՞ զայն, ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ գրաւէ": Այգեպանը պատասխանեց. "Տէ՛ր, թող այս տարի ալ մնայ. ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցիչ կը դնեմ: Այս ձեւով թերեւս պտուղ տայ. ապա թէ ոչ՝ գալ տարի կտրէ զայն"»:*

[Back to top](#)